67 : 13,4 13396 : 1,97 663 : 5,525

612 : 28,8 51039 : 9,63 3098 : 99,136

45. Գործողութիւնը շարունակել մինչև տասնորդա-
կանների 3-րդ կարգը:

ա) 69 : 7,8 բ) 3456 : 7,89 գ) 509 : 3,456

83 : 6,7 2345 : 6,78 26 : 8,405

9 : 12,3 1234 : 5,67 3 : 6,123

105 : 0,9 789 : 1,23 940 : 15,049

546 : 28,4 67 : 9,56 2701 : 63,234

դ) Չորրորդ դեպք. Տասնորդական թիւը բաժանել
տասնորդական թիւով:

Բացատրութիւն.

ա) 4,5 : 1,8 = 45 : 18 = 2,5;

բ) 4,5 : 0,18 = 450 : 18 = 25;

գ) 4,5 : 0,018 = 4500 : 18 = 250;

դ) 0,45 : 1,8 = 4,5 : 18 = 0,25;

ե) 0,45 : 0,18 = 45 : 18 = 2,5;

զ) 0,45 : 0,018 = 450 : 18 = 25;

է) 0,045 : 1,8 = 0,45 : 18 = 0,025;

ը) 0,045 : 0,18 = 4,5 : 18 = 0,25;

թ) 0,045 : 0,018 = 45 : 18 = 2,5:

46. ա) 45,5 : 32,5 բ) 4,55 : 6,5 գ) 65,806 : 63,275

460,2 : 7,8 6,29 : 7,4 309,492 : 85,97

55,35 : 7,38 56,25 : 7,5 268,32 : 4,128

3681,96 : 7,32 9,9 : 1,65 2,124 : 70,8

268,32 : 41,28 51,3 : 6,84 9,9 : 0,165

Գործողութիւնը շարունակել մինչև տասնորդականի

3-րդ կարգը:

47. ա) 9,3 : 14,5 բ) 83,79 : 3,7 գ) 29,076 : 15,29

20,8 : 6,48 6,725 : 0,123 604,208 : 89,076

9,1 : 13,364 8,907 : 28,94 18,7 : 24,3

71,23 : 1,94 76,428 : 70,2 32,15 : 68,7

60,84 : 2,732 7,645 : 2,8 81,274 : 96,8

48. ա) 0,76 : 2,34 բ) 63,7 : 3,456 գ) 2,34 : 0,76

0,042 : 0,25 70,8 : 8,65 0,25 : 0,042

6,503 : 72,6 85,2 : 5,7 72,6 : 6,503

4,027 : 9,6 0,9 : 0,34 9,6 : 4,027

0,45 : 1,9 0,34 : 0,9 1,9 : 0,45

Տասնորդական թւերով բաժանման գործնական կա-
նոն բոլոր դեպքերի համար:

Բաժանարարը եթէ լինէր ա) ամբողջ թիւ և բ) տաս-
նորդական թիւ:

ԳՈՐԾՆԱԿՆ ԽՆԴԻՐՆԵՐ

259. Մի դասարանի երկայնութիւնը 8,35 մ է և լայ-
նութիւնը 6,40 մ. նա ի՞նչ բարձրութիւն պէտք է ունե-
նայ 200 խմ օդ տեղաւորելու համար:

260. Աղիւսները սովորաբար 25 սմ երկայնութիւն են
ունենում, 12,5 սմ լայնութիւն և 6,5 սմ հաստութիւն.
1 խմ կազմելու համար նրանցից որքան պէտք է դարսել:

261. Այգպիսի աղիւմներից որքան հարկաւոր է (շաղախը չհաշւած) 750,25 խմ պատ շարելու համար:

262. Հիմա գործածուող շէշական լուցկիների երկայնութիւնը 5 սմ է, լայնութիւնը 0,2 սմ, հաստութիւնը 0,15 սմ է. 1 խմ փայտից որքան լուցկի դուրս կգայ (կըրկուտը հաշւի չառած):

263. 1 խմ օդի քաշը 1,299 քլգ է. 1 000 քլգ (1 տօննը) օդն ի՞նչ ծաւալ կունենայ:

264. 1 խամ սնդիկը 13,598 գմ քաշ ունի. 1 քլգ-ը որքան տեղ կբռնէ:

265. Նկուղին տեղ բանալու համար պէտք է 129,375 խմ հող հանել: Առաջին օրը փորած 6,25 մ երկայնութեան, 4,60 մ լայնութեան և 0,90 մ խորութեան փոսը այս հողի որ մասը պարունակած կլինէր:

266. Պէտք է լցնել մի փոս, որ 16,50 մ երկայնութիւն, 7,60 մ լայնութիւն և 3,25 մ խորութիւն ունի: Քանի՞ 1,75 խորանարդ մետրանոց սայլաբեռ հարկաւոր կլինի:

267. Աւազանի երկայնութիւնը 26,50 մ է, լայնութիւնը 13,25 մ և խորութիւնը 3,36 մ: Ո՞րքան ժամանակեայ մէջ նա կլցւի, եթէ ժամը 49,1575 խմ ջուր թափի նրանց մէջ:

268. Շէշական լուցկիների տուփերի երկայնութիւնը 6 սմ է լինում, լայնութիւնը 3,8 սմ և բարձրութիւնը 2 սմ: Այս տուփերից քանիսը կտեղաւորեն մի արկղում, որի երկայնութիւնը 1,25 մ է, լայնութիւնը 0,85 մ և բարձրութիւնը 0,64 մ:

269. 53,50 բուբուռ մի փայտակոյտ՝ գնեցին, որի երկայնութիւնը 4,50 մ էր, բարձրութիւնը 1,35 մ և լայնութիւնը 1 մ էր: Մի խորանարդ մետրի գինն ի՞նչ էր:

XV ՄԻՋԱԿ (ՄԻՋԻՆ) ԹԻԻ ԵՒ ԵՐԵՔԻ ԿԱՆՈՆ

Ա. ԻՐԱՇՐՉԱՆ

Երկրագործութիւն եւ արհեստ

Հիմնական խնդիրներ. ա. 8,80 մետր բրդէ կտորը թրջոց դրւելուց յետոյ 8,25 մետր դարձաւ. 100 մետր կտորից որքան կպակսի: բ) 1,50 մետր լայնութեան կտորից զգեստի համար 12,50 մետր բաւական կլինէր. որքան պէտք է գնւի, եթէ կտորը 0,25 մետրով աւելի նեղ է: ա) Թիֆլիսի նահանգում մասնաւոր հողատէրերի սեփականութիւնը 961,000 դեսետաին է, Բագւի նահանգում՝ 246 904 դ, Գանձակի նահանգում՝ 440 800 դ, Երևանի նահանգում՝ 60 126 դ: Միջին թւով քանի կալւածատիրական դեսետաին է գալիս իւրաքանչիւր նահանգի վրայ:

ա. Երկրագործական հաշիւներ

Երկրագործի գլխաւոր հարստութիւնը հողն է: Որքան շատ և պարարտ հող ունենայ նա, այնքան աւելի բարեկեցիկ կլինի: Կովկասում հողերի մի մասը թագաւորական է, միւսը կալւածատիրական: Գիւղացիները թագաւորական հողերի համար հարկ վճարում են տէրութեանը, իսկ կալւածատիրական հողերի համար կալւածատէրերին տուրք կամ «բահրա» են վճարում, որ սովորաբար տասանորդ է անւանւում: Հիմա այս տուրքը շատ տեղերում աւելի է տասանորդից և տէրութեան հարկից աւելի է ու ծանր. բերքի $\frac{1}{4}$ — $\frac{1}{3}$ կալւածատիրոջը մաս հանող տեղեր կան: Տաւարն արածացնելու համար էլ արօտատեղերի տուրք կայ: Գիւղացիները տէրութեան կամ կալւածատիրոջ օգտին ձրի աշխատանքներ էլ են կատարում ճանապարհներ և այլն շինելով, իրենց սայլերով, գրաստներով բեռ կրելով և այլն:

270. Թիֆլիսի նահանգի գիւղերում արական չափահաս անձերի թիւը ներկայումս 29819 է, իսկ Երևանի նահանգի գիւղերում 61420, Թիֆլիսի նահանգում կալւածատիրական 114000 ղեսեատին հող է բաժանւած գիւղացիներին, իսկ Երևանի նահանգում՝ 98272 դ: Այս նահանգներին ամեն մէկում իւրաքանչիւր չափահաս տղամարդու միջակ թւով սրբան կալւածատիրական հող է ընկնում:

271. Բագրի նահանգի գիւղերում արական անձերի թիւը 40748 է, սրանց հողաբաժինը 110305 դ է, Գանձակի նահանգի գիւղերում արական անձերի թիւը 133580 է, սրանց հողաբաժինը 307234 դ է: Միջակ թւով սրբան կալւածատիրական հող է հասնում ամեն մի նահանգի իւրաքանչիւր արական անձին:

272. Անդրկովկասի 5 նահանգների, այն է՝ Թիֆլիսի, Քուրթայի, Գանձակի, Բագուի և Երևանի հողերի ընդհանուր տարածութիւնը 15751737 դ է, որից 11120487 դ գտնւում է գանձարանի և մասնաւոր հողատէրերի իշխանութեան տակ, իսկ մնացածը յանձնւած է գիւղացիներին: Եթէ այս 5 նահանգների գիւղական ծխերի թիւը 370500 է, ամեն մի ծխի միջակ թւով սրբան հող է ընկնում:

273. 1000—1200 մետր բարձրութեան վրայ գտնւող արտերում (օր. Փարպի գիւղաշրջանում) ցորենի 13 մինչև 12,5 փութը 78 մինչև 68 փութ հունձք է տալիս: Գանել թէ մէկ փթին որքանից մինչև որքան է գալիս:

274. Նոյն Փարպի գիւղաշրջանում 2000—2200 մետր բարձրութեան վրայ գտնւող արտերում ցորենի 10,5—10 փութը 37—30 փութ հունձք է տալիս: Գանել թէ մէկին որքանից մինչև որքան բերք է գալիս:

275. Նոյն գիւղաշրջանում 1000—1200 մետր բարձրութեան վրայ ցանած 15,5—15 փութ գարին 93—82,5 փութ հունձք է տալիս: Հաշւել, թէ այս տեսակ հացահատիկի մէկին սրբան է գալիս:

276. Նոյն շրջանում 2000—2200 մետր բարձրութեան վրայ ցանած 13—12,5 փութ գարին 52—50 փութ հունձք է տալիս: Հաշւել, թէ գարու ցանքի մէկին սրբան է գալիս:

277. 1895 թ. կարսի նահանգում ճալա գիւղի մօտ 18,5 ղեսեատին հողում արած 9,25 սոմառ գարու ցանքից հունձք եղել է 29,6 սոմառ, իսկ Արագի գիւղի մօտ 16 ղեսեատին հողում արած 8 սոմառ գարու ցանքից հունձք է եղել է 38,24 սոմառ. իւրաքանչիւր տեղի ցանքը մօտաւորապէս մէկին սրբան բերք է տւել:

278. Նոյն տարին նոյն ճալա գիւղի հողերի մի մասում ցանւած էր 11,5 սոմառ ցորեն (1 սոմառը 16 կոտ կամ 18 փութ) և ստացել էին 73,83 սոմառ հունձք, իսկ նրա մօտ ընկած Արագի գիւղի հողերում ցանւած 13,25 սոմառ ցորենի ցանքից ստացել էր 46,375 սոմառ հունձք: ա) Այս երկու տեղերից իւրաքանչիւրում սոմառը սրբան բերք է տւել և բ) Երկուսը միջակ թւով միասին սրբան բերք են տւել:

Հողից աւելի արդիւնք ստանալու համար լուսաւորւած երկրներում աղբում են այն: Վերջերս չինական երկրագործութեան հետեւելով՝ նոր փորձեր են արւած մարգային մշակման (կուլտուրայի) վրայ: Այսպիսի մշակման երկու եղանակ կայ. ա) հացահատիկները նախ մի առանձին փոքր տեղ ցանում են և 3—4 շաբաթ յետոյ տեղափոխում են, կաղամբի պէս շիթիլ են անում ընդարձակ մարգերում, այսինքն՝ իւրաքանչիւր բողբոջ հեռու-հեռու առանձին են տնկում, բ) հացահատիկները հէնց սկզբից իրարից հեռու-հեռու են ցանում մարզի մէջ և այլևս չեն տեղափոխում, այլ որոշ ժամանակամիջոցում բոյսերի ստորին մասը հողով ծածկում են, ուրիշ խօսքով՝ նրանց բուզը լցնում են:

Առաջին եղանակը գործադրելի է փոքր հողաբաժին-

ների համար, մէկ կամ երկու դեսետտինի վրայ, իսկ երկրորդը կարելի է գործադրել և տասնեակ տարածութեան դեսետտին հողի վրայ: Այսպէս՝

279. 80 սաժէն երկարութիւն և 30 սաժէին լայնութիւն ունեցող 1 դեսետտինը լայնութեամբ 6 վերջոկանոց շերտերի բաժանելով՝ կստանանք 240 շերտ, որի կէս մասում շիթիլ կտնկելի, կէսը կմնայ ազատ միջանցքների համար: Ամեն մի այդպիսի շերտում տնկում են երեք կարգ շիթիլ, իրարից 4-ական վերջոկ հեռու: Իմանալ՝ ա) մի դեսետտինում ընդամենը քանի շիթիլ կտնկելի, բ) քանի գրւանքայ ցորեն կցանելի, գ) քանի փութ բերք կստացւի, եթէ 1 շիթիլից միջակ թւով 10 հասկ ստացւի, 1 հասկից 20 հատիկ և եթէ 100 հատիկը 1 մսխալ քաշ ունենան:

280. Մի ուրիշ արտում, որ մէկ դեսետտին էր և նոյն ձևն ունէր, նոյն եղանակով ցանք արին և հողի պարարտութեան պատճառով իւրաքանչիւր շիթիլին միջակ թւով 12 հասկ եկաւ: Իմանալ. ա) այս արտից քանի փութ հունձք ստացւեց, բ) այս երկու արտերից միջակ թւով սրբան բերք ստացւեց:

281. Մի արտ, որ 60 սժ երկայնութիւն և 40 սժ լայնութիւն ունէր, դարձեալ 6 վերջոկանոց շերտերի և միջանցքների վերածւեց և նոյն կարգով շիթիլներ տնկւեցին նրանում 4-ական վերջոկ հեռաւորութեան վրայ. եթէ բերքը այս անգամ 302 փ. 20 Ֆ 88 մ էր եղել, ուրեմն ամեն մի շիթիլից միջակ թւով քանի հասկ առաջացած պէտք է լինէր, հասկում 22-ական հատիկ հաշւելով և 100 հատիկը 1 մսխալ:

282. Մի ուրիշ արտ, որ 80 սժ երկայնութիւն և 30 սժ լայնութիւն ունէր, նոյնպէս 6 վերջոկանոց շերտերի ու միջանցքների վերածւեց և նոյն կարգով շիթիլներ տնկւեցին նրանում 4-ական վերջոկ հեռաւորութեան վրայ. եթէ հունձքը այս դէպքում 383,4 փ եղաւ, ուրեմն

իւրաքանչիւր շիթիլից միջակ թւով քանի հասկ պէտք է բուսնած լինէր, հասկերում միջակ թւով 24-ական հատիկ հաշւելով և 100 հատիկը՝ 1 մսխալ:

բ. Հացթուխի հաշիւներ

283. 156 սոմառ ցորենը սրբան փող կբռնէ, եթէ 1 սոմառի քաշը 18,5 փ է և եթէ 41 փութը ծախել են 51,25 ր:

284. Այս 156 սմ ցորենից սրբան ալիւր կստացւի, եթէ 100 փ ցորենից 75 փ ալիւր է դուրս գալիս:

285. 30 գրւանքայ ալիւրից 2,5 գրւանքանոց 16 հաց է թխում հացթուխը: Ո՞րքան հաց դուրս կգայ 15 սոմառ ցորենից, եթէ սոմառը 18,5 փթ քաշ ունի և եթէ մաքուր ցորենն աղալուց փթին 1 Ֆ պակասում է:

286. Նախընթաց խնդրի մէջ վերառած 15 սոմառ ցորենի ալիւրից շաղած խմորն ի՞նչ քաշ կունենայ, եթէ հացթուխը 100 գրւանքայ ալիւրին 50 գրւանքայ ջուր է հաշւում:

գ. Դերձակի հաշիւներ

287. Երկար ձևի վերարկուին 2,25 մ մահուդ է գրնում. քանի՞ արշինանոց կտորից դուրս կգայ մի այսպիսի վերարկուն:

288. Հասակաւոր մարդու կարճ ձևի վերարկուի համար հարկաւոր է լինում 2,8 արշին մահուդ. քանի՞ մետր է այսքանը, եթէ 1 մետրը 1,4061 արշին է:

289. 2,25 մետր հարկաւոր է լինում, եթէ կտորը 1,40 մետր լայնութիւն է ունենում: Քանի՞ արշին պէտք է կտրել 1,25 մետր լայնութիւն ունեցող կտորից:

290. 0,75 մետր լայնութեան կտորից սրբան պէտք է առնենք, որ հաւասար լինի 14 մետր երկայնութեան և 1,25 մետր լայնութեան կտորին:

դ. Հիանի հաշիւներ

291. 6,25 մ երկայնութեան և 5,40 մ լայնութեան սենեակի յատակը պէտք է տախտակամածել. քանի անտաշ տախտակ հարկաւոր կլինի, եթէ իւրաքանչիւր տախտակը 3,40 մ երկայնութիւն և 0,28 մ լայնութիւն ունի:

292. Քանի որ տաշելուց տախտակի 100 մասից 8-ը պակասում է, ուրեմն՝ ա) քանի քառակուսի մետր տախտակ հարկաւոր կլինի առնել, բ) քանի հատ տախտակ պէտք կլինի գնել, որպէսզի այդ սենեակի յատակը տաշած տախտակով կարելի լինի տախտակամածել:

293. Ո՞րքան կնստի № 290-ում յիշած սենեակի յատակի տախտակամածը, եթէ տախտակների և աշխատանքի 1 քառակուսի մետրին 3,65 ը ծախք է գալիս:

294. 9,25 արշին երկայնութեան և 6,25 արշին լայնութեան սենեակի առաստաղը տախտակամածելու համար քանի տախտակ հարկաւոր կլինի, եթէ իւրաքանչիւրի երկայնութիւնը 6 արշին, իսկ լայնութիւնը 0,75 արշին է, և եթէ տաշելուց 100 մասից 8,5 մասը պակասում է,

ե. Մանրավաճառի եւ մօթավաճառի հաշիւներ

295. Վաճառականը 2 տակառ սուրճ ստացաւ, որոնց քաշը տարայով 31,75 փութ էր, իսկ տարան՝ 2,25 փ: Բովելուց յետոյ այսքան սուրճը ի՞նչ քաշ կունենայ, եթէ բովելուց 100-ին 20 քաշը պակասում է:

296. Այդ նոյն վաճառականը սրբան փող կստանայ այս 29,5 փ ապրանքի վաճառքից, եթէ սրա կէսը հում, կէսը բոված ծախէ, և եթէ հում սուրճի ֆունտը 55 կ ծախէ, իսկ բովածի ֆունտը՝ 15 կ աւելի թանգ, իւրաքանչիւր ֆունտին էլ 2 կ բովելու ծախք հաշուելով:

297. Ո՞ր առքն է աւելի շահաւէտ. 1 գրւանքայ հում սուրճը 45 կոպէկով, թէ՛ 1 գրւանքայ բոված սուրճը 70 կոպէկով, եթէ բովելու ծախքը ֆունտին 2 կ է գալիս:

298. Ո՞րքան կարժենայ խառնած սուրճի 14,25 ֆունտը, որ առաջացել է 22,5 ֆ 46 կոպէկանոց, 31,40 ֆ 50 կոպէկանոց, 38,25 ֆ 60 կոպէկանոց տեսակների խառնուրդից:

ՋՆՆՋՆ ԻՐԱՂԲՋԱՆՆԵՐԻՑ ԳՈՐԾՆԵԿՆԵՐ
ԽՆԴԻՐՆԵՐ

299. 1902 թ. Կովկասի բոլոր դպրոցների աշակերտ-աշակերտուհիների թիւը 199144 է. աշակերտների թիւը ընդհանուր թւի կէսից 47343-ով աւելի է: Ո՞րքան են աշակերտուհիները:

300. 1904 թ. Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան իրաւասութեան տակ կար ընդամենը 2567 դպրոց 234251 աշակերտ-աշակերտուհիներով, որոնց վրայ ծախսել է ընդամենը 7732946 ըուբլի: Ո՞րքան ծախք է եղել միջին թւով՝ ա) ամեն մի դպրոցի, բ) իւրաքանչիւր աշակերտի վրայ և գ) սրբան ծախք է ընկնում իւրաքանչիւր բնակչի կրթութեան վրայ, եթէ որ Կովկասի ազգաբնակչութեան թիւն է 9781877:

301. Ռուսաստանի 50 նահանգներում 80159386 դեռ համայնական և 22260300 դեռ ծխական հողեր կան: Համայնական հիմքերի վրայ են տիրապետում հողը 6387289 գիւղական ծխեր, իսկ ծխական հիմունքների վրայ 1874840 ծխեր: Ո՞րքան է ընկնում միջին թւով իւրաքանչիւր տեսակ հողից ամեն մի նահանգի վրայ և իւրաքանչիւր գիւղական ծխի վրայ:

302. Ռուսաստանի բոլոր տարրական դպրոցներում 1904 թ. սովորում էին 3983972 հոգի, որոնց 100-ին 73 տղայ էր գալիս, 27՝ աղջիկ: Դպրոցական հասակ ունեցող երեխաների թիւը եթէ ընդունենք 12 միլիոն, այս դէպքում սրբան տղայ և աղջիկ այդ տարի գրկւած կլինէին դպրոցից:

303. 1906 թ. Թիւրքիայում, ուր կայ մօտ միլիոն ու կէս հայ ազգաբնակիչներ, 70 301 հայ աշակերտ և 29 999 հայ աշակերտուհի կար: Քանի սովորող է ընկնում իւրաքանչիւր 1 000 հայ ազգաբնակիչներ և դպրոցական հասակ ունեցող երիտաններից ճրքանն են ուսումից զուրկ մնացել այդ տարին, եթէ ընդունւած է, որ դպրոցական հասակ ունեցող երեխաների թիւը ամբողջ ազգաբնակիչներն $\frac{1}{10}$ մասըն է կազմում:

304. 1905—1906 թ. Եւրոպական վեց մեծ պետութիւնների խաղաղ ժամանակակալ գորքերի թիւը հասնում էր 3 464 353-ի: Փրանսիայի գորքերի թիւն էր 501 821, Գերմանիայինը 112 532-ով աւելի սրանից, Ռուսաստանի գորքերի թիւը 132 826-ով աւելի էր Փրանսիայի և Գերմանիայի գորքերի թւերի ընդհանուր գումարից: Աւստրիայինը Ռուսաստանի գորքերի թւի $\frac{1}{3}$ մասից 38 745-ով պակաս է: Անգլիան 50 441-ով աւելի գորք ունի Աւստրիայից: Ռ՞րքան է Իտալիայի գորքերի թիւը:

305. 1904 թ կովկասի ուսումնարանական շրջանի բոլոր դպրոցներում սովորող 234 256 աշակերտներից 123 513-ը ուսմանը էին, վրացի աշակերտների թիւը կազմում էր այս վերջին թւի $\frac{1}{3}$ մասը, հայ աշակերտների թիւը պակաս է եղել վրացիներից 1 391-ով. թուրք աշակերտների թիւը հայ աշակերտների թւի $\frac{1}{5}$ մասից պակաս էր 213-ով: Ռ՞րքան էր այլ ազգութիւններին պատկանող աշակերտների թիւը:

306. Երեք մանրավաճառ հաղարձ գնեցին՝ ֆունտը 12 կողէկով. նրանցից առաջինը վերցրեց 18 ֆունտ, երկրորդը առաջինից երկու անգամ աւելի և էլի 10 ֆունտ, իսկ երրորդի վերցրածը հաւասար է առաջին երկուսի գնածի $\frac{3}{8}$ մասին և 6 ֆունտ էլ աւելի: Ռ՞րքան վճարելու են նրանցից իւրաքանչիւրը:

307. 1904 թ. կովկասեան ուսումնարանական շրջանի

հոգաբարձութեան իրաւասութեան տակ կար ընդամենը 2 542 դպրոց 234 256 աշակերտ-աշակերտուհիներով. դպրոցների $\frac{1}{41}$ -ը մասը միջնակարգ էր և սովորողների թիւը ամբողջ աշակերտութեան $\frac{1}{8}$ մասից 1 191-ով աւելի էր: Իմանալ միջին թւով ա) իւրաքանչիւր միջնակարգ դպրոցին ճրքան աշակերտ է ընկնում և բ) իւրաքանչիւր տարական դպրոցին ճրքան աշակերտ է ընկնում:

308. Հայրն երեք որդոց թողել էր 12 600 ռ ժառանգութիւն՝ անհաւասար բաժանելու պայմանով: Մական մեկից աւելի ստացող փոքր որդին չկամենալով զրկել եղբայրներին, իրեն հասած բաժնից 1 700 ռ նւիրեց մեծ եղբորը և 1 100 ռ էլ միջնակ եղբորը, որից յետոյ նրանց ժառանգութիւնները հաւասարւեցին: Հայրն ամեն մէկին ճրքան ժառանգութիւն էր թողել:

309. Գիւղացին առաջին շաբաթուայ մէջ կարողացաւ հնձել և կապել 480 խուրձ ցորեն, երկրորդ շաբաթում 200 խուրձ աւելի, իսկ երրորդ շաբաթում 420 խուրձով պակաս առաջին երկու շաբաթուայ հնձածներից: Ռ՞րքան հատիկ կստանայ այդ բոլորից գիւղացին, եթէ որ իւրաքանչիւր 25 խուրձից ստացւում է 3 փ 30 ֆ:

310. Երեք քաղաքի ընդհանուր բնակիչների թիւն է 258 400. առաջին բնակիչների թիւը 5 անգամ աւելի է երկրորդի բնակիչների թւից, իսկ երկրորդինը 3 անգամ աւելի է երրորդի բնակիչների թւից: Ռ՞րքան բնակիչ ունի ամեն մի քաղաք:

311. Երկրագործը իր մի արտից ստացաւ զուտ արդիւնք 120 ռ, երկրորդից՝ 8 անգամ աւելի քան առաջինից, իսկ երրորդից՝ առջին երկու արտերից ստացածից 10 անգամ պակաս: Ռ՞րքան արդիւնք ստացաւ նա երեք արտերից միասին:

312. 1904 թ. Անդրկովկասի բոլոր այգիներից ստացւած է 15 530 328,3 փութ խաղող: Ռ՞րքան եկամուտ կստացւի այդ բոլորից, եթէ որ իւրաքանչիւր 1,9 փութ

խաղողից ստացւում է մի վեղրօ գինի և եթէ գինու վեղրօն արժէ միլիոն հաշուով 1,35 ռուբ:

313. 1902 թ. Ռուսաստանից արտահանւել է 638 միլլ. փուլթ նաւթ 1904 թ. 24 միլլ. փուլթ պակաս, իսկ 1906 թ. 167 միլլ. փուլթ պակաս 1902 թ. արտահանածից: Այս երեք տարւայ մէջ ձրքան փող է ներմուծւել նաւթի արտահանութեան պատճառով, եթէ որ մի փուլթ նաւթը վաճառւել է 15 կոպէկով:

314. Գիւղացին ունէր երեք շտեմարանում 486 փ գարի: Առաջինում կար 2 անգամ և էլի 15 փթով աւելի երկրորդից, իսկ երրորդ շտեմարանում եղածը հաւասար էր առաջին երկուսի մէջ եղածի գումարին: Ո՞րքան գարի կար ամեն մի շտեմարանում:

315. Երեք տարբեր մեծութիւն ունեցող տակառներում 79 վեղրօ 8 շտօֆ գինի կար: Առաջին տակառում եղած գինին երկու անգամ աւելի էր, քան երկու տակառների գինին միասին. իսկ երկրորդ տակառի գինին 6 վ 4 շտ: աւելի էր երրորդ տակառի գինուց: Ո՞րքան գինի կայ առաջին տակառում:

316. 1408 միլլիօն հոգուց բաղկացած մարդկութեան 510 միլլ քրիստոնեաներ են, վերջիններից 2,55 անգամ պակաս մահմեդականներ են. հրէաների թիւը ամբողջ մարդկութեան 176-րդ մասն է կազմում. մահմեդականների թւի կրկնապատիկից եթէ պակասեցնենք 10 միլլ. կտանանք բուզղիստների և բրամիսնների թիւը, իսկ մնացածը կոապաշտներ են: Ո՞րքան են վերջինները:

317. Երեք ճանապարհորդ անցել են 6592 վերստ ճանապարհ: Առաջինն անցել է 3 անգամ, իսկ երրորդը չորս անգամ աւելի երկրորդից: Դրանցից ամեն մէկը քանի՞ վերստ ճանապարհ է անցել:

318. Կալւածատէրն իր չորս շտեմարանում ունէր 1500 փ ցորեն: Առաջին շտեմարանի ցորենի քանակը 20 փ

աւելի էր երկրորդից. երկրորդինը աւելի էր երրորդից 3 անգամ, իսկ երրորդ շտեմարանինը 2 անգամ և էլի 40 փ աւելի էր չորրորդ շտեմարանում եղած ցորենի քանակից: Ո՞րքան ցորեն կար առաջին շտեմարանում:

319. Ո՞րքան շահ կստացւի տարեկան 1000 ռ, եթէ դրւած է 8% -ով, 12% -ով, 15% և այլն:

320. Ո՞րքան շահ կստացւի 800 ռ երեք տարւայ ընթացքում, եթէ տրւած է 4% -ով, 6% -ով, 12% -ով և այլն:

321. Առևտրականի 2000 ռ գործադրած գումարը առևտուրի մէջ շահեց 18% : Այդ գումարի տարեկան եկամուտը ձրքան կլինի:

322. 1897 թ. Թիֆլիսի ազգաբնակչութեան թիւը հասնում էր 159,590-ի: Ո՞րքան ուռւ և ձրքան հայ ազգաբնակչութիւն կար այդ թւականին Թիֆլիսում, եթէ որ ուռւները կազմում էին ամբողջ ազգաբնակչութեան $29,8\%$ -ը, իսկ հայերը $29,5\%$ -ը:

323. Ո՞ր դրամագլուխը տարեկան 60 ռուբ շահ կարող է բերել, եթէ հաշւենք 8% -ով:

324. Քանի՞ տարւայ ընթացքում 10% -ով տրւած 18 000 ռ 5 400 ռ շահ կբերէ:

325. Գիւղացին վաշխառուից 400 ռ փող վերցրեց մի տարի ժամանակով և 25% -ով: Պարտքը վճարելիս սա յանձնեց վաշխառուին 600 ռ: Քանի՞ տարի յետոյ պարտքը վճարեց:

326. 400 ռուբլուց տարեկան ստացւում է 20 ռուբլի շահ: Քանի՞ տոկոսով է տրւած:

327. 1200 ռուբլուց 3 տարւայ ընթացքում ստացւում է 180 ռուբլի շահ: Քանի՞ տոկոսով է հաշւած:

328. Դպրոցն ունի 600 աշակերտ, որոնցից տարւայ վերջը փոխադրւել էին 420-ը: Այս քանի՞ տոկոս է անում:

329. Առևտրականը տոկոսով 6 400 ռ փող վերցրեց. հինգ տարուց յետոյ նա վերադարձրեց այդ փողերը տոկոսներով ընդամենը 8320 ռ: Քանի՞ տոկոսով էր փող վերցրել:

330. 2 ջրաղաց 45 օրում օրական 22 ժամ բանելով, աղում են 3398 ֆ ալիւր: Ո՞րքան կարող են աղալ 3 նոյնպիսի ջրաղացը 52 օրում, եթէ որ ջրաղացներն անընդհատ աղան:

331. Գուլպայ գործելու մեքենան 15 օրում օրական 8 ժամ աշխատելով, պատրաստում է 30 զոյգ գուլպայ: Քանի՞ զոյգ գուլպայ կգործեն 28 մեքենան 8 օրում, օրական 10 ժամ բանելով:

332. 36 գործարանային բանուր 24 օր աշխատելով կարողացան մեքենայի վրայ պատրաստել 3456 արշ մահուտ: Քանի արշին նոյն մահուտից կարող են պատրաստել 89 բանուրը 57 օրւայ ընթացքում:

333. 26 բանուր 30 օրում՝ օրական 12 ժամ աշխատելով, փորեցին 2 վ 337 ս 1 ոտնաչափ երկարութեամբ մի առու: Ո՞րքան բանուր կհարկաւորւի, որպէսզի 29 օրում, օրական 15 ժամ աշխատելով՝ 5 վ 296 ս 3 ոտ առու անցկացւի:

334. Մի գիշերօթիկ դպրոցում 160 աշակերտի 60 օր կերակրելու համար հարկաւորւում է 120 փ միս: Ո՞րքան միս կհարկաւորւի 210 աշակերտի համար մի ամբողջ ուսումնական տարում, եթէ որ երկու դէպքում էլ իւրաքանչիւր մարդու տրւում է նոյն քանակութեամբ միս, եթէ տարին նահանջ է և եթէ ուսումնական տարին հաշւենք սեպտեմբերի սկզբից մինչև մայիսի 25-ը:

335. Երկու խումբ բանուրներ մի գործից վաստակեցին միասին 882,40 բուրլի: Առաջին խումբը բաղկացած էր 28 հոգուց, որոնք բանել էին 20 օր, օրական 13 ժամ. երկրորդ խումբը՝ 32 հոգուց, որոնք աշխատել էին 27 օր, օրական 12 ժամ: Ամեն մի խումբը որքան փող էր վաստակել:

336. Երկաթուղու ճանապարհի 7 վ. 150 ս. տարածութեան վրայ եղած հողային աշխատանքները կատարե-

լու. համար վարձեցին 40 բանուր, բայց որովհետև նկատեցին, որ այսքան աշխատող ձեռներով գործը նշանակած ժամանակին չի վերջանայ, 4 օրից յետոյ աւելացրին 25 բանուր: Քանի՞ օրում կարելի եղաւ վերջացնել հողային աշխատանքները, եթէ որ իւրաքանչիւր բանուր օրական պատրաստում էր 10 սաժ տարածութիւն:

337. Երկու գիւղերից կառքերով դուրս եկան իրար հանդէպ երկու ճանապարհորդ և 48 ժամից յետոյ հանդիպեցին իրար: Ճանապարհորդներից մէկը մի ժամում անցնում էր 9 վերստ: Ո՞րքան էր անցնում ամեն մի ժամում երկրորդ ճանապարհորդը, եթէ որ այդ երկու քաղաքների հեռաւորութիւնն է 960 վերստ:

338. Երկու կայարաններից, որոնք միմեանցից հեռու էին 1258 վ 160 սաժ, միաժամանակ միմեանց հանդէպ դուրս եկան երկու գնացք և 21 ժամից յետոյ հանդիպեցին իրար: Գնացքներից մէկը մի ժամում անցնում էր 32 վերստ 260 սաժ: Ո՞րքան է անցնում ամեն մի ժամում երկրորդ գնացքը:

339. Երկու տարբեր կայարաններից դէմառդէմ դուրս եկան միաժամանակ ապրանքատար և մարդատար երկու գնացքներ: Առաջինը իւրաքանչիւր ժամում անցնում էր 15 վերստ, իսկ երկրորդը 36 վերստ: Քանի՞ ժամից յետոյ այդ երկու գնացքներն իրար կհանդիպեն, եթէ որ կայարանների միջև հեռաւորութիւնը 1479 վերստ է և եթէ ճանապարհին՝ մինչև հանդիպումը՝ 2 ժամ հանգիստ են առել:

340. Մօսկւայից մինչև Պետերբուրգ 604 վերստ է: Այդ երկու քաղաքներից տարբեր ժամանակներում իրար հանդէպ դուրս եկան երկու մարդատար գնացքներ, որոնցից մէկը, Մոսկւայից դուրս եկածը, իւրաքանչիւր ժամում անցնում է 36 վերստ, իսկ Պետերբուրգից մեկնածը՝ դրանից 1 վերստով պակաս: Իմանալ, թէ գնացքներից

որն աւելի վաղ է դուրս եկել և քանի՞ ժամով, եթէ որ նրանք միմեանց հանդիպել են Պետերբուրգից 324 վերստ հեռաւորութեան վրայ:

341. Ճաշից յետոյ ժամը 3-ին Բագւից մեկնեց դէպի Ռօստով պօստային մի գնացք, որ իւրաքանչիւր ժամում անցնում էր 32 վերստ: Երեկոյեան ժամը 10-ին նրա ետեւից դուրս եկաւ մի արագընթաց գնացք, անցնելով ամեն մի ժամում 48 վերստ: Իմանալ երկրորդ գնացքը ա) քանի՞ ժամից յետոյ, բ) օրւայ որ ժամին և գ) Բագւից քանի՞ վերստ հեռաւորութեան վրայ կհասնի առաջին գրնացքին:

342. Աւազանն ունի երկու խողովակ: Մէկով մի րոպէսում աւազանի մէջ լցւում է 14 վեդրօ, իսկ երկրորդով 12 վեդրօ ջուր: Քանի՞ րոպէսում կլցւի աւազանը, եթէ նա տանում է 676 վեդրօ ջուր:

343. Չրամբարն երկու խողովակ ունի: Մէկով մի րոպէսում ներս է լցւում 17 վեդրօ ջուր, իսկ միւսով աւազանից դուրս է հոսում ամեն մի րոպէսում 12 վեդրօ ջուր: Քանի՞ ժամում կլցւի Չրամբարը, եթէ բաց անենք միաժամանակ երկու խողովակն էլ և եթէ նրա մէջ տեղաւորւում է 900 վեդրօ ջուր:

344. Երեք խողովակ ունեցող մի Չրամբար տանում է 840 տակառ, 28 վեդրօ, 8 շտօֆ ջուր: Խողովակներից մէկով 45 րոպէսում ներս է լցւում 80 տակ, 17 վեդրօ 5 շտ ջուր, երկրորդ խողովակով 32 րոպէսում ներս է լցւում 30 տ 25 վ 6 շտ ջուր, իսկ երրորդ խողովակով աւազանից դուրս է թափւում 1 ժամ 20 րոպէսում 70 տակ 32 վ ջուր: Ո՞րքան ժամանակամիջոցում կլցւի աւազանը, եթէ երեք խողովակներն էլ միաժամանակ բաց անեն:

345. Երկու տեսակ կովի իւղից, որնցից մէկի փութն արժէ 12 ռ, իսկ միւսինը 16 ռ, 24 փութ խառնուրդ

կազմեցին, փութը 15 ռուբլիով: Ո՞րքան պէտք է վերցընել իւրաքանչիւր տեսակից:

346. Առևտրականը խառնեց իրար հետ 2 փ 34 Ֆ երկու տեսակ սուրճ՝ 40 կոպ և 60 կ ֆունտը: Նա ամբողջ խառնուրդը վաճառեց առանց օգուտի և վնասի 53,20 ռուբ: Քանի՞ ֆունտ էր վերցրել իւրաքանչիւր տեսակից:

347. Ալրավաճառը խառնեց երկու տեսակ ալիւր իւրար հետ. մէկից վերցրեց 260 փ. փութը 1,60 ռուբ, միւսից 320 փ, փութը 2,80 ռուբ: Ամբողջ այդ խառնուրդը նա յետոյ վաճառեց և բոլորից շահ ունեցաւ 138 ռուբլի: Ո՞րքանով վաճառեց ալիւրի խառնուրդի մի փութը:

348. Գինեվաճառը 24 վեդրօ գինու հետ, որի մի վեդրօն արժէ 7,50 կոպ, խառնեց 6 վեդրօ ջուր: Ո՞րքան նա վնաս կամ օգուտ ստացաւ, եթէ որ խառնուրդի մի վեդրօն վաճառեց 6 ռ 25 կոպ:

349. Մանրափաճառը խառնեց երկու տեսակ բրինձ. վերցրեց 8 փ 25 գ 12 կոպէկանոց և որոշ քանակութեամբ էլ՝ ֆունտը 9 կոպէկանոց: Ամբողջ խառնուրդը վաճառելով 81 ռուբլու, նա 9,81 ռուբ վնաս ունեցաւ: Խառնուրդի համար երկրորդ տեսակից որքան էր վերցրել:

350. Երկու վաճառական իրենց ապրանքները միմեանց հետ փոխանակեցին. մէկը տւեց 70 թոփ մահուդ, որոնցից իւրաքանչիւրը 67 արշին էր և ստացաւ միւսից 208 թոփ քաթան՝ իւրաքանչիւրը 48 արշինանոց: Մահուդի արշինն արժէր 2,50 ռ, իսկ երեք արշին քաթանը՝ 2,25 ռ: Սրանցից որը պարտաւոր է փող վճարել և որքան:

351. Վաճառականը 120 փ 10 գր շաքարի համար վճարել է 769,60 ռ, իսկ 58 փ թէյի համար 2436 ռ: Ո՞րքան պէտք է վճարել 260 փ 20 գր շաքարի և 23 փ թէյի համար:

352. Մի կտոր մահուդի համար, որից արդէն 17 արշին կտրած է, վաճառականը պահանջում է 875 ռ: Քանի՞

արշին է եղել իսկական թոփը, եթէ այդ ամբողջապէս արժէր 994 ռուբլի:

353. Հացթուխը մի այրավաճառից գնեց 105 փութ ալիւր, իսկ միւսից միեկնոյն գնով 144 փութ: Ո՞րքան վաճարեց հացթուխը ամեն մի այրավաճառի, եթէ որ երկրորդին 85,80 ռ աւելի է վճարել:

354. 124 գոյգ կօշիկը և 90 գոյգ կրկնակօշիկը արժէ 1044,50 ռ: Մի գոյգ կօշիկը և մի գոյգ կրկնակօշիկը միասին արժեն 9,15 ռ: Ո՞րքան արժէ մի գոյգ կօշիկը և մի գոյգ կրկնակօշիկը առանձին-առանձին:

355. Դերձակը 36 արշ մահուղը և 24 արշ դրապը գնեց 268,80 ռ: Դրապի արշինը երկու անգամ աւելի թանգ էր մահուղի արշինի գնից: Ո՞րք անարժէ մի արշին մահուղը և մի արշին դրապը:

356. Գիւղացին վաճառեց 120 փ 20 ֆ ցորեն և 80 փ 28 ֆ գարի և բոլորի համար ստացաւ 283,24 ռ: Ո՞րքան ստացաւ առանձնապէս բոլոր ցորենի և ձրքան բոլոր գարու համար, եթէ որ ցորենի փութը 40 կ աւելի թանգ արժէր գարու փթից:

357. Երկու արկղների մէջ հաւասարապէս լցրած է երկու տեսակ ընկոյզ՝ ֆունտը 25 կոպ և 18 կոպ: Առաջին տեսակի բոլոր ընկոյզը 2 ռ 24 կ աւելի արժէր երկրորդ տեսակից: Ո՞րքան ընկոյզ կար երկու արկղում:

358. Վաճառականը գործարանում լապտերներ գրնեց, իւրաքանչիւրը 3,60 ռ: Որովհետև փոխադրութեան ժամանակ 18 ջարդել էին, փասը ծածկելու համար նա վաճառեց ֆնացած ամեն մի լապտերը 4,80 ռ: Ո՞րքան լապտեր էր գնել վաճառականը:

359. Վաճառականը 9 փ 30 ֆ թէյին և 120 փ շաքարին վճարեց 2130 ռ. մի ուրիշը միեկնոյն գներով վերցրեց 6 փ 30 ֆ թէյ և 120 ֆ շաքար՝ 1770 ռուբլի վճարելով: Ո՞րքան արժէ թէյի մի ֆունտը և շաքարի մի փութը:

360. Գէորգեան ճեմարանի աշակերտների համար տարւայ սկիզբին գնեցին 94 արշ սև և 450 արշ կապոյտ մահուղ 1726 ռուբլի արժողութեամբ: Յունւարին նոյն գնեցրով գնեցին 190 արշ սև, 450 արշ կապոյտ մահուղ և վաճարեցին 2110 ռ: Ո՞րքան արժէր սև և կապոյտ մահուղների ամեն մի արշինը:

361. Գէորգեան ճեմարանի համար գնւած է 15 սաժ եղևնու և 12 սաժ մայրի փայտ և վճարւած է բոլորի համար 840 ռ: Միեկնոյն գներով Վաղարշապատի ծխական դպրոցի համար գնւած է մի սաժէն եղևնու և մի սաժ մայրի փայտ և վճարւած է ընդամենը 63 ռ: Ո՞րքան արժէր իւրաքանչիւր տեսակ փայտի սաժէնը:

362. Արծաթագործն առաջին անգամ պատրաստեց 45 սեղանի և 21 թէյի արծաթէ գդախներ, որոնք միասին քաշում էին 9 ֆունտ 16 ռ: Երկրորդ անգամ պատրաստեց միեկնոյն ծանրութեան 9 սեղանի և 33 հատ թէյի գդախներ, որոնք միասին քաշում էին 4 ֆունտ: Իմանալ իւրաքանչիւր սեղանի և թէյի գդախի քաշը և իւրաքանչիւր տեսակ գդախի գինը, եթէ որ արծաթագործը արծաթի իւրաքանչիւր մսխալը աշխատավարձի հետ միասին տալիս էր 27 կոպ:

363. Անասնավաճառը եթէ իր ունեցած բոլոր ոչխարները վաճառէ իւրաքանչիւրը 7,50 ռ, շահ կստանայ 58,50 ռ, իսկ եթէ վաճառէ 8 ռ 20 կոպ, շահ կստանայ 104 ռ: Անասնավաճառը ձրքան ոչխար է ունեցել:

364. Հայրն առաջարկեց որդուն լուծել 24 խնդիր այն պայմանով, որ իւրաքանչիւր հեշտ լուծած խնդրի համար ինքը վճարելու է 12 կոպ, իսկ իւրաքանչիւր չլուծածի համար որդին տալու է հօրը 4 կոպ: Աշխատութիւնը վերջացնելուց յետոյ հայրը տւեց որդուն 1 ռ 44 կ: Քանի՞ խնդիր էր լուծել որդին:

365. Ներսիսեան գպրոցի չբաւոր աշակերտների հա-

մար կօշկակարին պատւիրւած էր, որ որոշ ժամանակամիջոցում պատրաստ կ 145 զոյգ կօշիկ. ճիշտ նշանակած ժամանակին հասցրած իւրաքանչիւր զոյգի համար կօշկակարն ստանալու էր 5,60 ռ, իսկ ժամանակին չհասցրած իւրաքանչիւր զոյգի համար ինքը վճարելու էր 4,70 ռ: Հաշիւները վերջացնելիս կօշկակարն ստացաւ միայն 430,90 ռ: Քանի՞ զոյգ կօշիկ կարողացել էր հասցնել կօշկակարը ժամանակին և քանի՞սը՝ ոչ:

366. Գործատէրը շինութեան համար մի վարպետ վարձելիս պայմանաւորւեց, որ իւրաքանչիւր աշխատած օրւայ համար վարպետը ստանալու է 1,20 ռ աշխատավարձ, իսկ իւրաքանչիւր չաշխատած օրւայ համար վարպետը բացի օրավարձը չստանալուց, այլ և վճարելու էր գործարանատիրոջը 50 կ: 30 օր աշխատելուց յետոյ վարպետը ստացաւ 22,40 ռ: Քանի՞ օր էր նա աշխատել:

367. Դերձակը պատրաստել էր մի քանի ձմեռնային միատեսակ վերարկու: Նա հաշւեց, որ եթէ իւրաքանչիւր վերարկուն ծախէ 24 ռուբ, բոլորից 40 ռուբի վրաս կստանայ, իսկ եթէ վաճառէ 30 ռուբ, այս զէպքում ոչ միայն վրասը կծածկէ, այլև 80 ռուբ շահ կունենայ: Քանի՞ վերարկու էր պատրաստել դերձակը և ընդամենը սրբան ծախք էր նստել բոլոր վերարկուններն իր վրայ:

368. 48 տղամարդ և 50 կին բանւորներ չորս շաբաթւայ համար աշխատավարձ ստացան 3120 ռ: Որոշել իւրաքանչիւր բանւորի և բանւորուհու մի շաբաթւայ աշխատավարձը, եթէ որ 25 կինը օրական ստանում էին այնքան, որքան և 15 տղամարդը:

369. Մանրովաճառը գնեց 25ֆ սուրճ, 5 փ20 ֆ շաքար և 32 ֆ թէյ և ընդամենը վճարեց 92,25 ռ: Սուրճի իւրաքանչիւր ֆունտը 3 անգամ, իսկ թէյինը 10 անգամ աւելի արժէր շաքարի ամեն մի ֆունտի գնից: Ո՞րքանով է գնել մանրովաճառը իւրաքանչիւր տեսակ ապրանքի մի ֆունտը:

370. Գործարանում աշխատում են 375 տղամարդ և կին: Իւրաքանչիւր տղամարդ ամսական ստանում է 40 ռ, իսկ իւրաքանչիւր կին՝ 30 ռ: Քանի՞ տղամարդ և քանի՞ կին են աշխատում գործարանում, եթէ նրանք բոլորը միասին ամսական վաստակում են 13610 ռ:

371. Արծաթագործը վերցրեց 90 յարգի մի արծաթէ շաքարաման 72 յարգի մի մատուցարան և ձուլեց ու ըստացաւ 84 յարգի 4 գրվ 12 լոտ արծաթ: Իմանալ իւրաքանչիւրի քաշն առանձին*):

372. Միասին ձուլեցին 2 ֆունտ 70 յարգի, 5 ֆունտ 56 յարգի և 8 ֆունտ 90 յարգի երեք կտոր արծաթ: Ի՞նչ յարգի ձուլւածք ստացւեց:

373. Ձուլւած են՝ 1,5 ֆունտ մաքուր ոսկի, 3,5 ֆ. 60 յարգի ոսկի և 1 ֆունտ պղինձ միասին: Ձուլւածքն ի՞նչ յարգի դուրս եկաւ:

374. Երկու ֆունտ 80 յարգի և 8 ֆունտ 70 յարգի արծաթի կտորները ձուլել են միասին: Որոշել ստացւած ձուլւածքի յարգը:

375. Ոսկերիչը ձուլեց 10 ֆունտ 84 յարգի արծաթը 14 ֆունտ ցած յարգի արծաթի հետ և ստացաւ 70 յարգի արծաթ: Որոշել երկրորդ կտոր արծաթի յարգը:

376. Օրւայ սկզբից, այսինքն՝ կէսգիշերից սրբան է անցել, եթէ որ ժամացոյցը ցոյց է տալիս առաւօտւայ ժամը 5-ը, 8-ը, 10 ժ 20 ռ, 11 ժ 48 ռ, ճաշից յետոյ ժամը 2-ը, 5 ժ 30 ռ, երեկոյեան 7 ժ 58 ռ 11 ժ, 19 ռ և այլն:

**) Յարգ կոչւում է մի ֆունտ ձուլւածքի միջի մաքուր ոսկու կամ արծաթի մսխալների թիւը: Այսպէս, օրինակ, եթէ ստում են, որ մատանին շինւած է 56 յարգի ոսկուց, այդ նշանակում է, որ այդպիսի ձուլւածքի իւրաքանչիւր ֆունտի մէջ 56 մսխալ մաքուր ոսկի կայ և 40 մսխալ պղինձ կամ որևէ այլ խառնուրդ: Նոյնն էլ պէտք է ի նկատի ունենալ դօլիաններով հաշւելիս:

377 Տարւայ սկզբից մինչև փետրուարի 12-ը, մարտի 29-ը, մայիսի 30-ը, յուլիսի 8-ը, նոյեմբերի 1-ը, դեկտեմբերի 20-ը քանի՜ ամբողջ՝ ամիս և ամբողջ օր է անցել:

378 Քանի՜ ժամ է անցել առաւօտայ ժամը 5-ից մինչև նոյն առաւօտայ ժամը 10-ը, 11 ժամ 30 րոպ, մինչև ճաշից յետոյ ժամը 2-ը, 6-ը, 7 ժ 30 րոպէն:

379 Հաշիւը, թէ առաւօտայ 7 ժամ 30 րոպէից մինչև երեկոյեան 7 ժ 30 ր, 8 ժ 20 ր, 10 ժ 50 ր, 19 ժ 45 ր, 12 ժամը՝ քանի՜ ժամ կլինի:

380 Քանի՜ ամբողջ ամիս և օր է անցել յունւարի 16-ից մինչև ապրիլի 25-ը, մարտի 21-ից մինչև յունիսի 7-ը, մայիսի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը և այլն:

381 Իմանալ, թէ որքան ժամանակ է անցել՝ երկուշաբթի օրւայ առաւօտայ 8 ժամից մինչև երեքշաբթի օրւայ առաւօտայ 10 ժամը, չորեքշաբթի օրւայ առաւօտեան 10 ժամ 15 րոպէից մինչև ուրբաթ օրւայ երեկոյեան 9 ժամ 17 րոպէն:

382 Այժմ ժամը քանի՞ն է, եթէ օրւայ սկզբից անցել է 8 ժամ 10 րոպէ, 10 ժամ 59 րոպէ, 16 ժամ 44 րոպէ, 20 ժամ 48 րոպէ և այլն:

383 Ո՞ր ժամն է այժմ, եթէ որ առաւօտայ ժամը 7-ից անցել է 5 ժամ, 8 ժամ 30 րոպէ, 11 ժամ 30 ր, 18 ժամ 52 րոպէ և այլն:

384 Քանի՜ օր է անցել այս տարւանից, 1898 թ. սկզբից մինչև նոյն թւի ապրիլի 5-ը, 1908 թ. սկզբից մինչև նոյն թւի հոկտեմբերի 18-ը, նոյեմբերի 9-ը, դեկտեմբերի 2-ը և այլն:

385 Ո՞ր ամսւայ քանի՞ն է, եթէ որ նահանջ տարւայ սկզբից անցել է 45 օր, 62 օր, 140 օր, 201 օր, 294 օր, 345 օր:

386 Հայոց գրերի գիւտը եղել է 404 թ.: Հաշւել, թէ երբ լրացած կլինի այս նշանաւոր գիւտի 1500 ամեակը:

387 Բաֆֆին ծնւել է 1835 թ. և մեռաւ 53 տարեկան հասակում: Ե՞րբ մեռաւ նա:

388 Մի մարդ 12 տարի 8 ամիս 21 օր օտարութեան մէջ ֆալուց յետոյ 1905 թ. օգոստոսի 8-ին վերադարձաւ հայրենիք: Ո՞ր թւականին էր նա դիմել օտարութեան:

389 Մեզանում դասերն սկսում են առաւօտեան 8 ժ 30 րոպէին և վերջանում են ժամը 1-ից 15 րոպէ անց: Ո՞րքան է տեւում հինգ դասից, ամեն մէկը, եթէ որ դասամիջոցները տեւում են ընդամենը 1 ժամ:

390 Քանի՜ տարի է անցել Քրիստոսի ծննդից մինչև Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցի հիմնւելը, այսինքն՝ մինչև 1825 թ.: Ո՞րքան ժամանակ է, որ գոյութիւն ունի Ներսիսեան դպրանոցը:

391 Քանի՜ տարի, ամիս, օր և ժամ է անցել Քրիստոսի ծննդից՝ մինչև այս րոպէն, մինչև 1900 թ. մայիսի 4-ը ճաշից հետոյ 5 ժամ 19 րոպէն, մինչև 1909 թւի սեպտեմբերի 30-ի առաւօտեան 6 ժամ 29 րոպէն:

392 1820 թւի ապրիլի 4-ից անցել էր 72 տարի 29 օր, որ Խրիմեան Հայրիկը կաթողիկոս ընտրւեց: Իմանալ թէ նա երբ կաթողիկոսական գահը բարձրացաւ:

393 Ե՞րբ վախճանւեց Խրիմիեան Հայրիկը, եթէ նա 17 տարի 5 ամիս և 25 օր կաթողիկոսութիւն արաւ:

394 Ռուսաստանում սահմանադրութիւն հրատարակւեց 1905 թ հոկտեմբերի 17-ին. Ո՞րքան ժամանակ է անցել այդ օրւանից:

395 Նիկողայոս երկրորդ կայսրը գահ բարձրացաւ 1894 թ հոկտեմբերի 21-ին: Ո՞րքան ժամանակ է որ նա թագաւորում է:

396 Մեզանից 114 տարի առաջ աղա Մահմէդ խանը աւերել էր Թիֆլիսը: Ո՞ր թւականին տեղի ունեցաւ այդ:

397 Այժմեան կաթողիկոս Իգմիլիեանը ծնւել է

1845 թ փետրվարի 12-ին: Նրա հասակը 63 տարուց անցել էր 8 ամիս 19 օր, երբ որ կաթոզիկոս ընտրւեց: Ե՞րբ նա կաթոզիկոս ընտրւեց:

398. Գէորգեան շեմարանի 25-ամեակը կատարւել է 1899 թ: Ե՞րբ է հիմնւել:

399. Վարդանանց պատերազմը տեղի է ունեցել 451 թ յունիսի 2-ին: Ո՞րքան ժամանակ է անցել մինչև այժմ:

400. Տաճկական սահմանադրութիւնն հաստատւեց 1908 թ. յուլիսի 10-ին: Որքան ժամանակ է անցել այդ օրւանից:

401. Սենեակի յատակի երկարութիւնն է 3 սաժ 6 ոտնաչափ, իսկ լայնութիւնը 2 սաժ 5 ոտնաչափ: Ինչ կարժենայ այդպիսի 5 յատակների ներկելը, եթէ իւրաքանչիւր քառ սաժէնը ներկում են 49 կոպ:

402. Ժառանգութիւն մնացած 1 վ 240 սժ 7 ոտնաչափ երկարութեամբ և 460 սժ 5 ոտնաչափ լայնութեամբ պարտէզը երեք եղբայր բաժանեցին իրենց մէջ: Մեծ եղբայրն ստացաւ ամբողջ պարտէզի $\frac{1}{3}$ մասը, միջնակը՝ մնացածի $\frac{2}{7}$ մասը, մնացածն էլ հասաւ փոքրին: Ո՞րքան տարածութիւն հասաւ փոքր եղբորը:

403. Մի մարդ շինութեան համար մի հողաբաժին գնեց 75 սժ երկարութեամբ և 42 սաժ լայնութեամբ՝ իւրաքանչիւր ք սաժ 30 կոպէկով, այս հողաբաժնի $\frac{1}{3}$ մասը վաճառեց կրկնապատիկ գնով: Ո՞րքան կնստի մնացածի ամեն մի սաժենն իր վրայ:

404. Սենեակի յատակը, որի երկարութիւնն է 4 սաժ 5 ոտնաչափ, իսկ լայնութիւնը 3 սաժ 4 ոտնաչափ, տախտակամածելու համար գնեցին միքանի տախտակ, որոնց երկարութիւնն է 3 սաժ 2 ոտնաչափ և լայնութիւնը 1,5 ոտն: Ո՞րքան կարժենայ յատակի տախտակամածելը, եթէ որ իւրաքանչիւր տախտակ արժէ 1,25 ըուր:

405. Սենեակի ծաւալն հաւասար է 336 խոր արշինի:

Ո՞րքան է նրա լայնութիւնը, եթէ որ երկարութիւնը 8 արշ, իսկ բարձրութիւնը հաւասար է լայնութեան $\frac{3}{4}$ -ին:

406. Դպրոցի դահլիճի երկարութիւնն է 8 սաժ, լայնութիւնը 5,2 սաժ, իսկ բարձրութիւնը 4,5 սաժ: Ո՞րքան օդ կհասնի իւրաքանչիւր աշակերտի, եթէ որ այդ դասարանի աշակերտների թիւն է 128:

407. Աւագանի երկարութիւնն է 6 սաժ 5 որաչափ, լայնութիւնը 4 սաժ 2 ոտնաչափ, իսկ բարձրութիւնը լայնութեան $\frac{3}{10}$ մասն է կազմում: Ո՞րքան ջուր կտանի այս աւագանը եթէ իւրաքանչիւր խոր. ոտն. տարածութեան մէջ տեղաւորւել կարող է 2 վեղրօ 3 շոֆ ջուր:

408. 8 սաժ 2 արշ 4 վ երկարութիւն, 5 սաժ, 1 արշ. լայնութիւն և 4 սաժ 2 արշ 8 վ երկարութիւն ունեցող մի քարաշէն շտեմարանում ցորեն պէտք է լցնէին: Քանի՞ փութ ցորեն կարելի է պահել այդ շտեմարանում, եթէ որ իւրաքանչիւր 8 փ 7 Փ ցորենը բռնում է 1 խորանարդ արշին տարածութիւն:

Handwritten calculations:

$$\begin{array}{r} 75 \\ 42 \\ \hline 150 \\ 300 \\ \hline 3150 \end{array}$$

$$\begin{array}{r} 75 \\ 42 \\ \hline 150 \\ 300 \\ \hline 3150 \end{array}$$

$$\begin{array}{r} 75 \\ 42 \\ \hline 150 \\ 300 \\ \hline 3150 \end{array}$$

$$\begin{array}{r} 75 \\ 42 \\ \hline 150 \\ 300 \\ \hline 3150 \end{array}$$

ԱՒԵԼԻ ԲԱՐԳ ԽՆԳԻՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

76. 59 644 ր:	124. Տղամարդը՝ 1170, կինը՝ 936, երեխան՝ 585 միութիւն:	125. 180 000 ճօճում:
77. 152 945 ր:	126. Անքաշից՝ 305 մ, քաշածից 165 մ: Անքաշածից կարելի է հանել 1525 մ, քաշածից՝ 1650 մ:	152. 2 տող:
79. 67 564 ր:	127. Ոչխարի մսից՝ 1726 մ, խոզի մսից՝ 900 մ:	153. 11 520 անգամ:
80. ա) 64 484 ր, բ) 19 097 ր, գ) 45 387 ր:	128. Սիսեռից՝ 8565 մ, լորեխից՝ 8600 մ, բրնձից՝ 2370 մ, ցորենի ալիւրից՝ 4 456 ² / ₃ մ և կարտոֆէլից՝ 3008 մ:	154. 80 վեզրօ:
82. Երևանինը 60331 ր, Ղարաբաղ. 10 865 ր:	130. 2772 զարկ:	155. 45,60 բուրլի:
86. Շուշույ գաւառում 7 106 բնակիչ աւելի է:	133. 89,28 մետր:	156. 2,76 բուրլի:
87. ա) Շամախու գաւառը 3085 վերստով ընդարձակ է բ) Շամախու գաւառը 154 757 բնակիչ պակաս ունի:	134. 524 վերստ 144 սաժէն:	157. Մանրավաճառը 32,76 ր վաստակ ունեցաւ, գործարանատիրոջից 47,76 ր աւելի ստացաւ:
88. ա) Նոր-Բայազէթի գաւառը 2 612 քմ աւելի ընդարձակ է և բ) Բագլայ գաւառից 13 920 բնակիչ պակաս ունի:	135. 4074 օր:	158. 114 տր, 56 օր, 16 ժամ:
92. ա) 278 320 բնակիչ, բ) 135 184 բնակ աւելի:	136. 31 556 925 վայրկեան:	159. 3 տր, 18 ժամ:
93. ա) 237 552 բնակիչ, բ) 209 554 բնակ աւելի:	137. 2 551 443 վայրկեան:	160. 3 օր, 6 ժամ 40 րոպ:
109. Ռուսաստանում 35 հոգուն, Շէլյցարի-այում 9 հոգուն (մնց. 143):	138. 441 հզրմետր:	161. 16 օր 6 ժամ 40 րոպ:
120. ա) Տղամարդունը 23 մ սպիտակուց, 12—19 մ՝ ճարպ և 106—117 մ՝ օսլայ:	139. 23 637 հզրմետր և 600 մետր:	162. 5 օր 18 ժամ 53 րոպ 20 վրկն:
121. 75,9 մ սիպտակուց, 51,15 ճարպ և 783,75 մ օսլայ:	140. 73 օր:	163. 694 գրս 5 դժ 4 հտ:
122. Տաւարի մսից՝ 59,25 կ, ոչխարի մսից՝ 76,27 կ, պանրից 27,5 կ:	143. 81 հատ:	164. 79 գրս 1 դժ 4 հտ:
123. Տաւարինը՝ 15 կ, ոչխարինը՝ 16 կ:	144. 64 հատ:	165. 11 օր 13 ժամ 46 րոպ 40 վրկն:
	145. 11 մսխալ:	166. 800 դաս:
	146. 801 հազարմետր 900 մետր:	200. 7987,03 ր:
	147. 75 մետր:	201. 1129,64 ր:
	148. 270:	202. 422,58 ր:
	149. 450 մետ:	203. 50,47 ր:
	150. Ոտով գնացողը 5,625 հզրմետր ելման կէտից հետո, ձիաւորը՝ 20,250 հազարմետր:	204. 30,43 ր:
	151. 9 375 հազարամ.	205. 48,91 ր:
		206. 17,47 ր:
		207. 3,68 ր:
		211. 357,93 ր:
		212. 46,07 ր:
		213. 1,73 կ:
		214. 17,70 ր:
		215. 2,04 ր:
		218. 5433,20 մանէթի, 1292,41 մնթ-ով:
		219. 79,375 քլգմ:
		220. Դ-Ն 351,31 աւելի:
		222. 11 351,94 մնթ:
		224. 66,354:

226. 1887,60 ր:	274. 3,5—3 փ:	304. 285 228:
227. 471,67 ր:	275. 6—5,5 փ:	305. 22 049:
229. 3170,16 ր:	276. 4-և 4:	306. ա) 2,16 ր, բ) 5,52 ր, գ) 3,60 ր:
232. 625 խմ:	277. ա) մօտ 5 սմո, բ) 4 սմո:	307. ա) Մօտ 453 ա ₂ , բ) 82 ա ₂ :
233. 170,24 խմ:	278. ա) 6,422 սմո և 3,5 սմո, բ) 4,961 սմո:	308. 2 500 ր, 3 100 ր, 7 000 ր:
234. 10 486,875 խմ:	279. ա) 345 480 շՔԼ, բ) 35 գրվ 94 մԼ, գ) 179 փ, 37 գրվ, 48 մԼ:	309. 285 փ:
236. 1,09 ր:	280. ա) 215 փ 37 գրվ, բ) 197 փ, 37 գրվ, 24 մԼ:	310. 13 560, 40 680, 203 400:
237. 252,508 քլգմ:	281. 15,27 հասկ:	311. 1188 ր:
238. ա) 159,712 խմ, բ) 276,30 ր:	282. 17,75 հասկ:	312. 110 3470,69:
239. ա) 151,632 խմ, բ) 151 632 քլգմ:	283. 3607,50 ր:	313. 258 450 000 ր:
242. 6 քլգմ:	284. 2164,5 փ:	314. 76 փ, 167 փ, 243 փ:
243. 85,354 քլգմ:	285. 5772 հաց:	315. 53 վ 2 շա:
244. 2 ր:	286. 405,84 փ:	316. 300 միլ:
245. 83,22 խմ:	287. 3,15 արշինանոց:	317. 824 վ, 2472 վ և 3296 վ:
246. 76 229 520 քլգմ:	288. 1,99 մետր:	318. 620 փ:
247. 952,87 ր:	289. 2,52 մետր:	321. 360 ր:
251. 0,08 խստ:	291. 36 հատ: (մնացորդով):	322. 47 599 և 47 133:
253. 6,31 մ:	292. ա) 36,68 քմ, բ) 39 2 (մնացորդով):	323. 750:
256. 6,875 Ֆ:	293. 123,19 մօտաւորապէս:	324. 3 տարւայ:
257. 4,05 խմ: (մնց)	294. 14 տախտակ մօտաւորապէս:	325. 2 տարի:
258. 229 169 հատ:	295. 23,6 փ:	326. 5%:
259. 3.742 մ (մնացորդով):	296. 664,34 ր:	327. 5%:
260. 492 հատ. (մնացորդով):	297. Հում սուրճի:	328. 70%:
261. 369,123 հատ:	298. 6.84 ր:	329. 6%:
262. 6 666 667 հատ: (մնացորդով):	299. 52 229:	330. 5990 փ 16 գ:
263. 769 823 խմ:	300. ա) 3008,31 ր, բ) 57,6, գ) 79 կ:	331. 1120 զոյգ:
264. 73,5402 խմ:	301. Ծխ 446 260 գ 11,87 գ Հմ. 1603 187,72 գ 12,39	332. 20 292 արշ:
265. 1/5 մասը:	302. 5 851 753 տղայ, 3 240 000 աղջիկ:	333. 45 բանւոր:
266. 232 (մնացորդով):	303. 60 սովորող, 49 700 երեխայ:	334. 703,5 փ:
267. 24 ժամում:		335. ա) 364 ր, բ) 518,40 ր:
268. 14 912 (մնց):		336. 9 օր:
269. 8,80 ր: (մնացորդով):		337. 11 վերստ:
270. Թիֆլիսի նահանգում 3,8 գ, Երևանի՝ 1,6:		338. 27 վ 200 սմ:
271. Բագլայ նահանգ. 2,6 գ, Գանձակի՝ 2,3:		339. 31 ժամ:
272. 12,5 գ:		340. Մոսկուայինը 1 ժմ:
273. 6—5,5 փ:		341. ա) 14 ժամ, բ) հետեւալ օրւայ 12 ժ, գ) 672 վերստ:

342. 26 րպ:	359. 3 ր և 8 ր:	373. 59 յարգի:
343. 3 ժմ:	360. 4 ր և 3 ր:	374. 72 յարգի:
344. 7 ժմ 32 րպ:	361. 28 ր և 35 ր:	375. 60 յարգի:
345. 6 փ և 18 Ֆ:	362. 2 լ 1 մ և 5 լ 2 մ:	388. 1892թ. նոյ. 18:
346. 38 փ և 76 Ֆ:	1,89 ր և 4,59 ր:	389. 45 րոպէ:
347. 2,50 ր:	363. 65 ոչխար:	392. 1892թ. մայ. 3-ին:
348. 7,50 ր:	364. 15 խնդիր:	393. 1907թ. հոկտեմ-
349. 8 փ 11 Ֆ:	365 108 զոյգ և 37 զոյգ	բերի 28-ին:
350. Երկրորդը՝ 4237 ր:	366. 22 օր:	400. 15,39 ր:
351. 2633,20 ր:	367. 20 վերարկու,	402. 54 188 քսժ. 38
352. 142 արշ:	520 ր:	ք.տո:
353. 231 ր և 316,80 ր:	368. 10 ր և 6 ր:	403. 15 կ:
354. 6,50 ր և 2,65 ր:	369. 15 կ, 45 կ, 1,50 կ:	404. 31,25 ր:
355. 3,20 ր և 6,40 ր:	370. 290 աղմ, 67 կին:	405. 7 արշ:
256. 96,84 ր և 192,80 ր:	371. 1 ք 14 լ 2 մ և	406. 1,4625 խսժ:
357. 32 Ֆ:	2 ք 29 լ 1 մ:	407. 5710,5 ջուր:
358. 54 լապտեր:	372. 76 յարգի:	408. 49785 փ 30 Ֆ:

ՆԿԱՏԻԱԾ ՎՐԻՊԱՎՆԵՐԸ

№ 14 Տպած է մէկին 411 հունն	սլէտը է լինէր	4:
» 72	1907 թ 491 559	491 659
» 93	ոչ թէ 6,6 այլ	6, այլ
» 104	134 251 աշակերտ...	234 251
» 109	ճանօթութեան վերջին տողում՝ 80-ին $7,296 \times 8 = 8 = 58,368...$	$7,296 \times 8 =$ $= 58,368$
» 124	Տես № 121 խնդրի միջին թւերը	№ 120
» 136	366 օր	365 օր
66 եր.	Հիմնին խնդրում 1854 թ	1824 թ
№ 180 խնդրում սեպտեմբերի 9-ին		2-ին
« 187 » » 1858 թ		1857 թ
» 198 » » 688 թ		588 թ
» 208 » » տարան 45,250 քլգ		4,250 քլգ

Handwritten calculations and notes on the right page, including:

- 1820 - 94
- 72 - 29
- 1892 - 123
- 17
- 1680
- 10 - 840
- 840
- 840
- 840
- 700
- 4
- 30
- 1845 - 43
- 63
- 260
- 1908
- 300
- 7 = 7
- 31 - 20
- 160
- 560
- 728
- 7 = 1 Ֆ. Գրգույ
- 4 Ֆ. Գրգույ = 1 " Գրգույ
- 2

25 4000 = 30.00
= 1.20

400

41666 1965
265
114

հրահարություն

հրահարություն

հրահարություն

հրահարություն

հրահարություն

հրահարություն

հրահարություն

30
41666 1965
2922
12000
11666
14800
13000
2950
14661
12899
11624.37
12020
60
180
166
140
1.34

հրահարություն

78
40

480
3
1440

40
24
160
144

41666 1965

« Ազգային գրադարան



NL0259194

Յ. ՏԻՐ ՄԻՐԱՐԵԱՆԻ ԺԱՄՈՒ ԳՐԵՐԸ

1. «Դասաւանդութեան ուղեցոյց», օրինակելի դասեր և նըրանց տեսութիւնը (փոխադրութիւն):	1 ր - 4
2. Հարաման-Ռուզամի «Երաշխանների վերածւած թւարանական խնդիրների ժողովածու»: Գ. տարւայ դասընթացը (փոխադրութիւն):	— 30
3. Նոյն գրքի Գ. տարւայ դասընթացը	— 35
4. «Ժողովրդի բնթերցանութիւնը»	— 25
5. «Գեոահանների ազատ բնթերցանութիւնը» (տեսութիւն և յանձնարարելի ու մերժելի գրքերի համառոտ գրախօսութեամբ)	40
6. «Գեոահաններն ինչ կարդան» (350 յանձնարարելի և մերժելի գրքերի համառոտ գրախօսութիւն)	25

ԳԻՆՆ Ե 35 ԿՈՂ.

511/076
 7-44